— Ի հարկէ, չաւ դատաստան է: Ո՞վ է տեսել, որ կինը բերան բաց անէ իր մարդու դէմ, մէկին երկու, երեք պատասխան տայ, կամ փախչէ իր հօր տունը: Եթէ քո էշը ախոռից փախչէ, ի՞նչ կանէս: Ի հարկէ, կը գնաս, ծեծելով կը բերես եւ իր մսուրքի վրայ կը կանգնեցնես: Փառաւորո՛ի մեր առաջնորդը, նա այդպիսի անզգամների պատիժը լաւ գիտէ:

— Ուրեմն լաւ առաջնորդ է, — ասացի ես:

Եկեղեցու երեցփոխանը, որ մի հաստափոր եւ հաստագլուխ մարդ էր, եւ խօսելու ժամանակ աջ կողմի աչքը միշտ խփում էր, պատասխանեց.

— Վանայ երկիրը մինչեւ այսօր այդպիսի առաջնորդ չէ տեսել. փաշայի հետ փաշայ է, խանի հետ խան է, բէկի հետ բէկ է, մի խօսքով, այնպիսի սալթանաթ ունի, որ սուլթանն էլ չունի: Ամէն անգամ, երբ փաշայի դուռն է գնում, կարծես մի մեծ սարդար լինի, մի խումբ ձիաւոր ետեւից, մի խումբ ձիաւոր առջեւից, փողոցներում տեղ չէ մնում, որ անցնեն: Թուրքերը նայում են եւ զարմացած ասում են միմեանց. «Տեսնում էք, ի՞նչ ջալալ ունի հայերի խալիֆան»: Երբ հասնում են փաշայի դուռը, ծառաները խումբով առաջն են դուրս գալիս, մէկը ձիու սանձն է բռնում, միւսը ասպանդակն է բռնում, ձեռքերի վրայ ձիուց վայր են բերում, եւ այնպէս առօք-փառօք ներս են տանում: Փաշան ոտքի է կանգնում, ձեռքը բռնում է եւ նստացնում է նրան իրանից վերեւ: — Ո՞վ է տեսել այդպիսի փառք, այդպիսի պատիւ:

— Այդ բոլորը շատ գեղեցիկ կը լինէր, — ասացի ես, — եթէ առաջնորդը իր վայելած պատոից օգուտ քաղէր եւ դէպի իր ժողովրդի բարին գործ դնէր: Բայց նրա համար ասում են...

— Ի՞նչ են ասում, — պինդ ձայնով հարցրեց երեցփոխանը:

Ես ոչինչ չպատասխանեցի: Թաղական խորհրդի անդամը, որ բոլոր ժամանակը լուռ էր, խօսեց.

— Մեզ համար այդքանն էլ բաւական է, պարոն, որ նա մեծ պատիւ է վայելում. նրա պատիւը մեր պատիւն է, նրա փառքը մեր փառքն է: Թող նա ոչինչ էլ չանէ ժողովրդի համար, բայց մենք նրա անունով պարծենում ենք թուրքերի առջեւ:

— Ասում են, որ նա թուրքերին աւելի շատ է սիրում, քան թէ հայերին:

— Այդպէս էլ պէտք է, — մէջ մտաւ երեցփոխանը, — հարկաւոր է, որ նրանց «խաթրն» էլ առնէ, նրանց էլ հաճոյանայ:

— Իսկ Հայրիկը ի՞նչ տեսակ մարդ է: